600.0153.24.05.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

24 մայիսի 2019 թվականի №153Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի №288Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2019 թվականի մայիսի 2-ին «ԷՐԻԷՄ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով մեկ տարի ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2007 թվականի հուլիսի 20-ի «ՄՏՔԻ ԲԱՆԱԼԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ռինդ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզիա տրամադրելու մասին» №311Ա որոշմամբ «ՄՏՔԻ ԲԱՆԱԼԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված և հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 31-ի «ՄՏՔԻ ԲԱՆԱԼԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության №0257 լիցենզիան վերաձևակերպելու մասին» №288Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) «ԷՐԻԷՄ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ որպես էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա վերաձևակերպված №0257 (այսուհետ՝ №0257 լիցենզիա) լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը,

բ) համաձայն Ընկերության տարբեր տարիների գրություններով ներկայացված տեղեկատվության՝ «Ռինդ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման աշխատանքները գրեթե ավարտված են, կառուցված է կայանի շենքը,

գ) Ընկերությունը 6-րդ անգամ է №0257 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի երկարաձգման հայտ ներկայացնում Հանձնաժողով,

դ) Հանձնաժողովի 2018 թվականի հուլիսի 18-ի №291Ա որոշմամբ «Ռինդ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (արտադրության) №0257 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել է 10 ամսով՝ մինչև 2019 թվականի մայիսի 25-ը,

ե) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

1) 5-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետի համաձայն՝ էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է տեղական էներգետիկական պաշարների, էներգիայի վերականգնվող աղբյուրների արդյունավետ օգտագործումը և դրան ուղղված տնտեսական ու իրավական մեխանիզմների կիրառումը,

2) 35-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաները տրվում են՝ հաշվի առնելով տեղական պաշարների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը,

զ) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման նպատակներից է կարգավորող մարմնի կողմից օրենքներով սահմանված իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանումը,

է) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի 81-րդ կետի համաձայն՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվում է նախկինում սահմանված կառուցման ժամանակահատվածից ոչ ավելի՝ հաշվի առնելով լիցենզավորված անձի, ինչպես նաև Հանձնաժողովի աշխատակազմի կողմից հիմնավորվող ժամկետը,

ը) №0257 լիցենզիայով ամրագրված «Ռինդ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը հայցվող 1 տարվա փոխարեն (առավելագույնը կարող է երկարաձգվել 10 ամսով) նպատակահարմար է երկարաձգել 9 ամսով, քանի որ դեռևս 2007 թվականի հուլիսից՝ «Ռինդ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզիայի տրամադրման պահից մինչ օրս, շուրջ 12 տարի, ամբողջությամբ չեն ավարտվել կայանի կառուցման աշխատանքները, ինչի արդյունքում, ըստ էության, խախտվում է համապատասխան բնական ռեսուրսի արդյունավետ օգտագործման պահանջը (ընդ որում, նույն մոտեցումը ներկայումս կիրառվում է բոլոր լիցենզավորված անձանց նկատմամբ), և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ինն ամսով երկարաձգել №0257 լիցենզիայով ամրագրված «ՌԻՆԴ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ Որոշման մեջ «մինչև 2019 թվականի մայիսի 25-ը» բառերը փոխարինելով «մինչև 2020 թվականի փետրվարի 25-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ №0257 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «ՌԻՆԴ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի սեպտեմբերի 7-ի №652-8493 գրությամբ Հանձնաժողով ներկայացված №ՀԲԵՆ18/152-01 երաշխիքի համաձայն երաշխավորված 5,080,000 (հինգ միլիոն ութսուն հազար) դրամ գումարից 2,540,000 (երկու միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 5,080,000 (հինգ միլիոն ութսուն հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2020 թվականի ապրիլի 10-ը գործողության ժամկետով:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի մայիսի 25-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
24 մայիսի 2019թ.